

# Թվանշանների առանձնացում

Սամվելը դպրոցում շատ լավ էր սովորում: Նրա մաթեմատիկայի ուսուցիչը չէր սիրում, որ հանձնարարված խնդիրները շուտ լուծած աշակերտները ձանձրանում էին իր դասերի ժամանակ: Դրա համար նա լրացուցիչ հետաքրքրաշարժ խնդիրներ էր պատրաստում այդ աշակերտներին տալու համար: Մի անգամ, դասարանական գրավոր աշխատանքը շուտ ավարտելուց հետո, Սամվելը ուսուցչից ստացավ հետևյալ խնդիրը. Տրված են երկու բնական թվեր՝  $a$  և  $b$ : Անհրաժեշտ է  $a$  թվի թվանշանների արանքում տեղադրել ճիշտ երկու հատ '+' նշան այնպես, որ ստացված արտահայտության արժեքը հավասար լինի  $b$ -ի: Սամվելին շատ հետաքրքրեց այդ խնդիրը և նա որոշեց ծրագիր գրել, որը կամայական  $a$  և  $b$  թվերի համար պարզում է բոլոր հնարավոր այդպիսի տեղադրումները:

Հիմա Սամվելն ինքն արդեն ուսուցիչ է, բայց դասավանդում է ինֆորմատիկա առարկան: Նա ձեզ հանձնարարել է գրել այդպիսի ծրագիր:

## Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված է երկու բնական թիվ՝  $a$ -ն և  $b$ -ն:  $a$ -ն չի պարունակում 0 թվանշանը: Մուտքի տվյալներն այնպիսին են, որ գոնե մեկ լուծում կա:

( $0 < a, b < 10^9$ )

## Ելքային տվյալներ

Անհրաժեշտ է արտածել  $a$ -ի թվանշանների մեջ ճիշտ երկու հատ '+' տեղադրելու բոլոր հնարավոր տարբերակները, որոնց դեպքում ստացված գումարի արժեքը հավասար է  $b$ -ի: Ամեն տարբերակ հարկավոր է արտածել նոր տողում:

Տարբերակների արտածման հերթականությունը կարևոր չէ:

## Օրինակներ

Մուտք	Ելք
12479 68	12+47+9
8845 97	8+84+5 88+4+5

Դիտարկենք առաջին օրինակը՝

12479 թվի մեջ 2 հատ '+' տեղադրելու բոլոր հնարավոր տարբերակներն են.

$$1+2+479 = 482 \neq 68$$

$$1+24+79 = 104 \neq 68$$

$$1+247+9 = 257 \neq 68$$

$$12+4+79 = 95 \neq 68$$

$$\mathbf{12+47+9 = 68}$$

$$124+7+9 = 140 \neq 68$$

